


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուկար/ոյ համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻՒԿ

20

ՍԱՆԳԻՄ



Բ. ԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻՒԿ

20

ՍԱՆԳԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակուի հարաք օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիս: Երկու քիւ ա-
ռաջ հրահարակուած քերքը 40 Սանդիս:
Զհրահարակուած գրութիւնը եւ յսրուիր:

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARENA

ԱԶԳԱՅԻՆ

ՄՈՒՐԱՅԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՄԷՓՕՏ ՄԸ

Ատենէ մը ի վեր գաղթական դայ-
եակ մը իր երեք տարեկան մանուկը առ-
ջը ձգած, սրճարանէ սրճարան, գինե-
տունէ գինետուն կը շրջի լուցկի եւ ա-
բէթ ծախելու պատրուակին տակ մու-
րացկանութեան նոր մէթոտ մը բերե-
լով հրապարակ:

Իայեակին այս դրութիւնը աւելի
զգուելի տպաւորութիւն մը կը թողու-
խոհականներու վրայ քան թէ աբգա-
հատանքի եւ կարեկցութեան, վասն զի
փոխանակ մանկան կը թուութեան եւ զար-
գացմանը խնամք տանելու, շատ կա-
նուխէն զայն բարոյական ամեն ընդու-
նակութիւններէ հեռացնելու տխուր ըն-
թացքին մէջ կը գտնուի:

Այս տողերը ընթերցողներուն ու-
շագրութեանը յանձնելնուս պատճառը
սա է որ, մեր ժողովուրդին մէկ մասին
ցոյց տուած քաջալերութիւնը համար-
ձակութիւն տուած է այդ կնոջ մինչև

խիլ Դաֆէ Սըլանտիդ մտնելով, հոն գըտ-
նուող օֆիսիէներու ու բարձր դասա-
կարգի մարդոց սրտնեղ լիթիւն պատճառ-
ուելու:

Այս քաջալերութենէն չլացած, ու-
րիշ կին մ'ալ, իր երեք, չորս եւ հինգ
տարեկան տղաքը առջը ձգած, դայ-
եակին օրինակին հետեւելու ելած է, ու
թէեւ մանկիկները կը դժկամակին եւ
շատ անգամ կուլան, բայց մայրը ըս-
պառնալով, այդ անմեղները սրճարան-
ներէ ներս կը հրէ:

Մէկ քանի անձինք քանիցս ազ-
գարարած են այդ կնոջ որ ետ կենայ
այս դրութենէն եւ պատրաստականու-
թիւն յայտնած են զիրենք Պուկարիկել
տալու միջոցը գտնելու. բայց կինը յա-
ռութեամբ մերժած է եւ յայտարարած
է թէ պիտի չարունակէ:

Այս տխուր իրողութիւնը ազգային
պաշտօնէութեան ուշագրութեանը յանձ-
նելով, կը յուսանք որ երեսի աղտ բե-
րող այս կանանց շրջագայութիւնը ար-
գելելու համար պարտ ու պատշաճը կը
տնօրինէ:

ԱՂԶԿԱՆՑ ԿՐԹԱՐԱՆ

Հինգշաբթի օրը Վառնաի Աղջկանց
Կրթարանի պարգեւաբաշխութեան հան-
դէսը կատարուեցաւ, երկսեռ ընտրելա-
գոյն բազմութեան մը ներկայութեանը:
Մէկ քանի ատենախօսութիւններ եղան
և ուսանողք սքանչելի կերպով երգեցին:
Փրօպէրեան դրութեամբ լմանկապարտի-
զական փորձեր կատարուեցան, ինչպէս
նաև մարմնամարզի փորձեր, որոնք շատ
փայլուն կերպով անցան: Հանդիսականք
իրենց անկեղծ գոհունակութիւնը յայտ-
նելով Տնօրէնուհի Ազն. Օր. Արմաւենի
Սահակեանի, լաւ տպաւորութեան մը
տակ մեկնեցան:

... Խմբագիր «Հայելի» Հանգէսի

«Խանասորի արշաւանքին մասնակցող
Ռուսահայերը ի՞նչ հալածանքներու և բան-
տարկութեանց ենթարկուեցան, իրենց տեղե-
րը վերադառնալէ ետքը»:

Այս ֆուաղը որ տեսնուեցաւ թիւ 38
«Շարժում»-ի նախալոգոսածին մէջ «Կարիճ»
ստորագրութեան տակ, ծայրէ ի ծայր բաց-
արձակ սուտ է, ի բաց առեալ մէկ Ռու-
սահայ, որն արդէն հինգ տարի առաջ դա-
տապարտուած էր Ռուս կառավարութեան
կողմէն, և զոր մենք կարող ենք հաստատել
երբ հակառակը պնդելու յանդգնի անիրա-
զէկ «Կարիճ»ը եւ կամ իրեն կռուանն եզող
թերթը:

ՈՒՂԵՒՈՐ

ՓՈՔՐԻԿ ԲԱՐՁԻԿԸ

Փոքրիկ բարձիկ սիրական,
կակուղ՝ գըլիսու տակ տըկար,
ճերմակ, տաքուկ, պատուական
փետրով լեցուած ինձ համար,
Հովին ձայնէն երբ վախնամ,
Գայլն ու մըրրիկ երբ գողան,

Վըրադ ննջել միշտ կուգամ,

Փոքրիկ բարձիկ սիրական:

Կան անթիւ խեղճ մանուկներ

Մերկ, մայր չունին, չունին տուն,

Եւ բարձ մ'անգամ չեն գըտներ

Երբ աչքերնին փակէ բուն:

Ո՛հ, դա՛ռն բալդ, միշտ բընատ՝

Կը տառապին երբ այսպէս,

Անո՛ւշ մայրիկ, անըգհատ

Արիւն կ'երթայ իմ սըրտէս:

ՏԿՆ. ՏԷՊՕՌՏ

Զ. Խ.



Անցեալ կերակի գիշեր Սապրսըղի
սալոնին մէջ հարսանեկան շնորհաու-
րութիւններ ընդունուած պահուն, ներ-
կայներէն երկու օրիորդներ կը խօսէին
— Երաժշտութիւն գիտէ՞ք, օրի-
որդ Սանգիկ:

— Բաւական:

— Կերգէ՞ք երբեմն.

— Երբէք:

— Դաշնակ կը զարնէ՞ք.

— Ո՛չ:

— Դէմա՞ն.

— Ամենեւին:

— Ի՞, քանօ՞ն.

— Չէ, չէ, մինակ տիւտիւկ կը
չալեմ:

Ամբակում աղան, որ գործով մը
Շումնու պիտի երթար, կը սկսի մը-
տածել թէ արդեօք ընտանիքն ալ հե-
տը տանի՞. ու չկրնալով այս մասին ու-
րոշում մը տալ, կերթայ իր բարեկամ
Արթաքի աղաին կարծիք հարցնելու:

— Արթաքի աղա, գիտե՞ս ա՛, եր-
կու երեք ամսուան համար Շումնու պի-
տի երթամ:

— Գիտեմ, Աստուած բարի ճանապարհ տալ:

— Հիմա չօլուխ չօճուխ հետ տանիմ մի, չի տանիմ մի, պիւր թիւրլիւխարար մը չեմ կրնար կոր տար, տանիմ նէ չատ ալ մասրաֆ պիտի ըլլայ:

— Մասրաֆէն կը փախչիս կոր նէ, մի՛ տանիր:

— Ամա ընտանիքով երթալն ալ պաշխա համ ունի:

— Է՛յ, հետդ տար:

— Բէք կը յոգնին ըսելով, շիտակ կը վախնամ կոր տանելու:

— Անանկ է նէ մի՛ տանիր:

— Հոս ալ մինակ նա՞սըլ ընեն սրտերնին կը նեղանայ:

— Անանկ է նէ տա՛ր:

— Եղբայր, ճամբան կը հիւընդնան տէյի չեմ ուզեր կոր:

— Է՛յ մի՛ տանիր:

— Ասոր հետ մեկտեղ, հետերնիս տօքթօռ կայ, հիւանդանան նէ կը նայի, հոս ալ ձգեմ նէ, կէնէ հիւանդութիւնը մարգուս համար է, հիւընդնան պիտի նէ, կէնէ կը հիւընդնան:

— Քանի որ պարապար հէքիմ ունիս, տա՛ր:

— Հա՛ ամա . . .

— Մի՛ տանիր:

— Հախ ունիս ամա . . .

— Տա՛ր:

— Կըսես կոր ամա ճանըմ . . .

— Աստուծոյ սիրուն ըլլայ եղբայր, կուզես տա՛ր, կուզես մի՛ տանիր, մինակ իմ գլուխս մի՛ տանիր:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Աժանս բոժոժիկ և ընկ.)

Կապրօվա

Վարժարանի մը մէջ, տարեկան հարցաքննութեան ատեն, բարոյագիտութեան դասատու մէկ երկու վարժա-

պետներ ու վարժուհիներ ա՛յնպիսի հարցումներ կընէին ուսանողներուն, որոնք մէյմէկ քարեր էին իրենց անձնական հակառակորդներուն դէմ. և այս հակառակորդներէն անոնք որ նոյն միջոցին ներկայ կը դառնէին, փոխադարձաբար միեւնոյն ընթացքը կը բռնէին անոնց դէմ:

Բարոյագիտութեան այս նոր մէթօտը, որ լաւ տպաւորութիւն չի թողուց ներկայ դառնող մէկ քանի չեղօք քննիչներու վրայ, անշուշտ ապագային պիտի նուիրէ ազգին բարոյապէս(°) զարգացեալ երիտասարդներ:

Վառնա

Հայկեան պարոնի մը հարուստ գաղափարներով օժտուած գլուխը երէկ ՚ի տես դրուեցաւ Հիննեց չիքակօյին մէջ: Կըսուի թէ արուեստագէտ պարտիզպան մը այդ գաղափարներու սերմէն պիտի ցանէ եղեր իր պարտէզին մէջ . . . ասմա խապախիի մը հովանիին տակ:

Պուրկազ

Սամաթիոյ պատմութիւնը լոյս տեսաւ հեղինակին . . . կոկորդին մէջ: Կը ծախուի Առնեմ Զիտամի գրատունը:




Ռուբճուգ

Ոչխարաքայլ յառաջդիմականացալեծածան հօտին երկրորդ քարտուղարը որոշեց բողոքագիր մը ներկայացնել որպէս զի նեղ փողոցներու սալայատակները ընդ հուպ շտկուին, ուր վերջերս վէլօսիբետով ման գալու ատեն անանկ ուժգին կերպով գլխիվայր եկաւ որ անցեալ ձմեռ կերած սքանչելի իրմիջ հեշ-վաւիկն քիթէն բերնէն եկաւ:

Ծիծաղ

ԾԱՆՈԹ ԴԵՍՔԵՐ



Գ.

ՅԻՊԷ

Համակերպող հրապարակագիր մը, միջադատակ, նիհար կազմուածքով, 45 էն 48 տարեկան. մազերն ալ մօրուքին պէս անխնամ. երիտասարդ եղած ատենէն իսկ հագուստի, նորաձևութեան և արդուզարդի հոգ տարած չըլլալուն, կատարեալ ճեղքիչ մը կը համարուի:

Քալած ատենը կը վախնայ ուժով քայլեր առնելու, զի մի գուցէ մըջուն մը կոխոտէ անգիտակցաբար:

Իր նշանաբանն է մտածելով գործել. քալած ատենը, կեցած ատենը, խօսած ատենը, գրած ատենը — թերևս պառկած ատենն ալ — միշտ խոհուն ու մտազբաղ կերէի. կը կարծես թէ բան մը միտքը բերել կ'ուզէ, և չի յաջողելուն՝ բարկութենէն պրկուէրը կը խածնէ անանկ ուժով մը՝ որ տարիներու երկար ընթացքի մը մէջ տակաւին մաշած, հատած ու սպառած չին:

Կեանքէ ձանձրացած, յոգնած, վանական կրօնաւորի մը երևոյթն ունի. շատ բան գիտէ, շատ բան կը գրէ և սակայն վերջը չի բերեր իր գրածներուն. եթէ խնդրոյ մը առթիւ յօդուածներու շարք մը սկսի, եւ մէկուն տակը փոխանակ շարունակելիի վերջ բառը կարգաս, չի կարծես թէ խմբագրական կամ գրաշարական սխալ մ'է, ու պարապ տեղը մի սպասեր նոյն յօդուածին շարունակութեանը, ան արդէն լմնացած է և ուրիշի մը սկսած, առանց վերջաւորութեան, առանց հետևութեան, անսկիզբուն և անվախճան:

Իր խօսակցութիւնն ալ գրածներուն պէս խուսափողական է. միշտ երորդ դէմքով կը խօսի. — Եթէ պարօնը հաճելու ըլլայ — Եթէ յարմար դատուի. — Եթէ կարելի ըլ-

լայ: Իր այս կցկտուր և երկդիմի խօսքերէն կը կարծես որ խորհրդաւոր մէկն է դիմացինդ. ընդհակառակը. հաստատապէս գիտցիր թէ բարի անձնաւորութիւն մ'է, և ասոր ապացոյցն ալ սա է որ երբ հրապարակաւ Յարդիմ ջակէն կառ վրայէն ըսելով զինքը զրպարտեն կամ նախատեն, քրիստոնէական ներողամիտ ոգիով մը գրուած Ուղիղ դատեմք մը կը նետէ հրապարակին վրայ ու այսու քաջալերելով իր թշնամիները, բաց ասպարէզ մը կը թողու անանց:

Եթէ բազդին մէկ բմահաճոյքովը այս մարդը փոխանակ հրապարակագրի, դատաւոր մը եղած ըլլար, այն ատեն աշխարհի ամենէն սոսկալի եղիւնագործը ու ամենայանգուգն գողը իր անսահման ներմանը պիտի արժանանային. բնաւ չպիտի պատժէր, չի պիտի դատապարտէր զանոնք. և եթէ քահանայ մը եղած ըլլար, տիեզերքի քրիստոնեայները գունդագունդ պիտի գային յանցանքնին անոր խոստովանելու, ու ամենէն մեղաւորը, ամենէն անկրօնը իսկ առանց ապաշխարանքի պիտի ընդունէր պօլ — քէսէն «Աստուած թողութիւն շնորհեսցէ՛մ. և մեղ տէր պապան պիտի վերսկսէր պրկուէրը խածնելու արարողութեան՝ զոր պահ մը ընդհատած էր:

X

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տիկին Շառլօթ Սմիթհ, ամերիկուհի մը, Ամուսնական Դաշնակցութիւն մը հիմնած է Նիւ Եօքքի մէջ:

Ամուսնութեան այդ առաքելութիւն, աղբսագրով մը կառավարութեան աջակցութիւնը խնդրած է իր այդ ձեռնարկին մէջ և ծրագիր մը ներկայացուցած է որուն բանի մը գլխաւոր կէտերը կը թարգմանենք.

Ա. Երկու սեռէ ամեն փնհատներ, օրէնքով ստիպուած ըլլան ամուսնանալու:

Բ. Ամուսնական Նախարարութիւն մը ստեղծել ինչպէս կան արտաքին և ներքին

գործոց, ելնական և հանրագումար շինութեանց նախարարութիւններ:

Գ. Կառավարական պիւտճէին մէջ գումար մը յատկացնել աղքատ աղջիկները կարգելու համար:

Դ. Այն ամեն հարուստ մարդիկ որոնք ամուրի մնալ կը սիրեն, ստիպուած ըլլան կառավարութեան վճարել տուրք մը որուն գումարը հաւասար ըլլայ ընտանիք մը ապրեցունելու համար անհրաժեշտ եղող գումարի մը:

Ե. Աղքատ բայց ամուսնանալ չուզողները բանտարկութեան դատապարտել:

Ինչպէս կը տեսնուի, աշխարհիս չորս կողմը մեծ ծիգեր կը թափուին ամուսնութիւնները շատցնելու համար, ինչ որ ենթադրել կուտայ որ տունը մնացած աղջիկներուն թիւը վտանգաւոր համեմատութիւն մը առաջ է:

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

ՀԱՃՈՅՔ

Սպանիացիին հաճոյքը՝ շոգոյան է:

Սուրճը՝ Գերմանացիին գինովութեան գեղթափը:

Թէյը՝ մեկամողձոտ Հոլանտացիին զրուարթարար նեկտուրն է:

Լեմոնադան՝ Իտալացիին բարկութեան ամբիշը:

Գարեջուրը՝ Շուեդացիին սրտին զովարար ըմպելին:

Օղին՝ Ղազարիին մէկ տարրն է:

Ծխախոտը՝ Տաճկաստանցիին սիրուն հաճոյքը:

Ճիս սեղան մը՝ Ֆրանսացիին գրախտն է:

Մեղրաջուրը՝ Ռուսին նեկտուրն է:

ՍԵՂԱՆ

Սեղանի վրայ Գերմանացին՝ շատ կ'ուտէ:

Անգղիացին՝ կը գինովնայ:

Սպանիացին՝ ժուժկալ է:

Ֆրանսացին՝ փափուկ:

Տաճկաստանցին՝ մեծարող:

ՊԵՐՃԱՆՔ

Պերճութիւնը՝ Գերմանացիին քով կը փայլի իր բերդերուն մէջ:

Անգղիացիինը՝ իր նաւատորմիդին մէջ:

Սպանիացիինը՝ իր զինուց մէջ:

Ֆրանսացիինը՝ իր պանդոկաց և կահկարասեաց մէջ:

Իտալացիինը՝ իր եկեղեցեաց մէջ:

Տաճկաստանցիինը՝ յաբրութեան մէջ:

ԱՐՔ

Գերմանացին՝ իւր կնոջ տէրն է:

Անգղիացին՝ բռնաւորը:

Ֆրանսացին՝ ընկերը:

Տաճկաստանցին՝ բաղդակիցը:

Իտալացին՝ պահապանը:

Սպանիացին՝ դահիճը:

ԼԵԶՈՒ

Խօսելու համար՝ Իտալերէն:

Պարծենալու համար՝ Սպանեօլերէն:

Շալլելու համար՝ Ֆրանսերէն:

Համոզելու համար՝ Յունարէն:

ԵՐԳ

Սպանեօլը իւր երգովը կուլայ:

Տաճկաստանցին կը հառաչէ:

Իտալացին կը գանգատի:

Գերմանացին՝ կը պոռչտայ:

Պերճիգացին՝ կ'որոտայ:

Ֆրանսացին՝ ինչպէս որ պէտք երգել:

Մ.

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Անցեալ օր Բոժոժիկ հրեղէն սուրհան-
դակով ժամուան մը մէջ շրջան կընէ ի Մար-
սէյլ, ի Լոնտոն, ի Ժընէվ, յԱթէնք և ի
Վառնա, որուն մասին մեզի բերած է հե-
տեւեալ տեղեկագիրը.

(Ի Մարսէյլ, Արմէնիաի տպարանին մէջ)

Բոժոժիկ. — Բարի լոյս Պ. խմբագիր.

Խմբագիրը — (Գանձանակ մը ներկայա-
ցընելով) Յիշեալ լիջիք:

— Ատ ի՞նչ է.

— Արմէնիաի օժանդակ գանձանակը:

— Հիմա ատիկա մէկդի ձգէ. տարին
12 ամիս թերթիդ մէջ կը տեսնանք կոր.
Ի՞նչպէս էք, աղէ՞կ էք.

— Օժանդակ գանձանակս Արմէնիաի
հաշուով է:

— Հասկցանք. վերջը.

— Առատ առատ շնորհեցէք:

— Երկան մը՛ներ. ձեզի համար կըսեն
թէ...

— Գանձանակ.

— Ազդերով կը լեցնէք կոր թերթը:

— Յիշեալ լիջիք առաջի գանձանակին:

— Հանգիստ թող տա գանձանակները:

— Գանձանակ, մի՞շտ գանձանակ.

— Հասկցուեցաւ. ձեր խելքը մալաւի
տիւ գանձանակով վարակուած է. Աստուած
բժշկութիւն պարգևէ: Ծառայ եմ:

(Ի Լոնտոն, Մարտի տպարանին մէջ)

— Բարի լոյս, Պ. խմբագիր.

— Պահանջողականաբար Աստուծոյ
բարին:

— Ա՛ռ բեզի ուրիշ նուագարան մը՛ն ալ:
Ի՞նչպէս էք, աղէ՞կ էք.

— Սպասողական գրութեամբ աղէկ ենք:

— Ձեզի համար կըսեն թէ...

— Ի՞նչ կ'ուզեն ըսեն. կեդրոնացումի
գրութեամբ պահանջողականաբար սպասելու
ենք:

— Ուղածնուդ պէս սպասեցէք: Ձեզի
համար կըսեն թէ անձնական վեճերով ըս-
կապ թերթը լեցնել.

— Կեդրոնացումի գրութիւնը անանկ
կը պահանջէր:

— Բայց մինչև ե՞րբ պիտի տեսէ.

— Կեդրոնացումի գրութիւնը գիտէ:
— Ուրեմն Աստուած ընթերցողներունը
ալ համբերութիւն պարգևէ: Մնաք բարով:

(Առմէնիի տպարանին մէջ)

— Բարի լոյս մօնսիէօ խմբագիր.

— Դիւանագիտական ներդաշնակու-
թեամբ՝ պօնժո՛ւռ մօն ամի:

— Հիմա ալ քու դաշնակդ մտիկ ընենք
պիտի. ի՞նչպէս էք.

— Դիւանագիտութիւն՝ սունկ նանկ կեր-
թանք կոր:

— Ձեզի համար կըսեն թէ...

— Եւրոպեան դիւանագիտութիւնը 61րդ
յօդուածի տրամադրութիւնը գործադրել
տալու է:

— Ձեզի համար կըսեն թէ մէկ ճիւղի
վրայ չէք կենար:

— Դիւանագիտութիւնը միշտ ճիւղէ
ճիւղ կը ցատկէ, և մենք հետեւելու ենք անոր:

— Է՛յ, ցատկել չգիտենք նէ ի՞նչ պի-
տի ընենք:

— Դիւանագիտութիւն, միշտ դիւա-
նագիտութիւն, որուն ղեկավարն է գրիչը,
անով պէտք է զինուինք:

— Անանկ է նէ կեցիր երթամ քանի
մը տուղինս փետուր գրիչ առնեմ ու զինուիմ:

(Ի Ժընէվ, Դրօշակի տպարանին մէջ)

— Բարեւ ձեզ, պարոն խմբագիրներ.

— Կո՛հ.

— Աղբար, ես կոհի մարդ չեմ.

— Կոհւ ասում ենք,

— Կատակը մեկդի. ի՞նչպէս էք:

— Կուոյ դաշտում պէտք է որոնել
մեր որպիսութիւն.

— Ձեզի համար կըսեն թէ

— Խփում ենք մեր ականջները և կրկ-
նում ենք, կո՛հ:

— Կըսեն թէ երբեմն խոշոր սուտեր
կը կլլեցնէք ժողովուրդին.

— Պէտք է կլլեցնել սուտը՝ որպէս զի
դուրս գայ կոհիւր. կո՛հ. կո՛հ. ուրիշ խօսք
պէտք չենք լսում. կո՛հ.

— Հասկցանք. դուք ալ կոհիւով մեր
գլուխը պիտի ուտէք. մնաք բարով:

(Աթէնքի մէջ Միութեան տպարանը)

— Բարի լոյս Պ. խմբագիրներ.

— Միութիւն, միութիւն .
— Հասկցանք, հասկցանք, ի՞նչպէս էք
աղէկ էք .

— Միութեան գործը կարգին է .
— Ձեզի համար կըսեն թէ . . .
— Միութիւնը զօրութիւն է . միու-
թիւն, միութիւն .

— Աղէկ ամա կըսեն թէ կարգ մը
վնասուած կեղծարարներու գրութիւններով
թերթը կը լեցնէք կոր .

— Ի՞նչ կուզեն ըսեն . միութիւն պիտի
պոսանք . միութիւն .

— Հէնք շնորհք երկու խօսք չպիտի
կրնանք ընել ձեզի հետ :

— Միութիւն, միութիւն, ցանկալի
միութիւն .

— Հասկցանք . ուղաձնուդ . չափ պո-
ռացէք : Ծառայ եմ :

(Ի Աստուծոյ, Տալիսի տպարանին մէջ)

— Բարեւ Տիար խմբագիր .
— Մեր խօսքը էշու ականջ ունեցող-
ներու համար չէ .

— Հէ՛ . . . ի՞նչ կըսես կոր :
— Մենք այն Տոնքի շօթներուն կ'ուղ-
ղենք մեր խօսքը որոնք . . .

— Իմ ըսելիքս այդ չէ :
— Ես լեռնցի եմ, փափկութենէ զուրկ,
ինչ որ ունիմ, այն պիտի աւամ :

— Ձեզի համար կըսեն թէ . . .
— Թէ թիւ կ'ծու կը խօսիմ .
— Դու ասես :

— Ծուռ գծին վրայ ուղիղ ճանապարհ
փնտռելը տխմարութիւն է, աւանակութիւն է :

— Ներեցէք, այդ տեղը կէտ մը դը-
րէք, ուշ մնացի, չպիտի կրնամ կենալ . մը-
նաք բարով :

(Շարժումի տպարանին մէջ)

— Բարեւ ձեզ պարոններ .
— Առաջին օրէն ըսած ենք թէ Շար-
ժում բաղձակողմանի և անաչառութիւն մ'է :

— Արաս գրէ . ի՞նչպէս էք, աղէկ էք .
— Շարժում այս պահուս հաստատ
կողմանի մը վրայ ամուր կեցած է :

— Ատ ալ չըլլալիք բան մըն է, բանի
որ միշտ շարժումի մէջ է : Ձեզի համար կը-
սեն թէ ձեր ուղղութենէն շեղած էք .

— Շարժումի հիմնադիրները թերթին
բացարձակ անկախութիւնը վճռած են .

— Է, շիտակը, անանկ ըրիք ա՛

— Ոչ մէկ տեսակ ազդեցութիւն, ան-
հատական թէ կուսակցական չպիտի կրնայ
Շարժումը շեղացնել իր ուղղութենէն :

— Բացի Դաշնակցութենէ : Մնաք բա-
րով . տեսնենք, մինչև ե՞րբ պիտի շարժիք
ինքնագովականներով :

(Իրաւունքի տպարանին մէջ)

— Բարի լոյս, տիար խմբագիր .
— Շրջահայեցութեամբ Աստուծոյ բարին :

— Ի՞նչպէս էք, աղէկ էք .
— Շրջահայեցութեամբ եւ ուղիղ դա-
տելով շնորհակալ ենք .

— Ձեզի համար կըսեն թէ . . .
— Առանց շրջահայեցութեան բայլ մը
առնողը անդնդոց մէջ կը գահավիժի, երկար
տարիներու փորձը իմ մէջս գոյացուցած է
այս համոզումը :

— Ձեզի համար կըսեն թէ շատ ան-
գամ իրաւունքին տէրը չէք .

— Հիմակուան ժամանակս ո՞վ կրնայ
իրաւունքին տէրը ըլլալ, միայն թէ շրջահա-
յեցութիւնը ձեռքէ ձգելու չէ :

— Դուն ալ բոլոր շրջահայեցութեամբդ
ապրէ : Մնաք բարով :

(Հայելիի տպարանին մէջ)

— Բարի լոյս Պ . խմբագիր .
— Յուսախաբութեամբ Աստուծոյ բարին :

— Ի՞նչպէս էք, աղէկ էք .
— Զուր ջանք, անօգուտ վաստակ,
պատգամախօսի մը չափ գիտեմ թէ երէկ
աղէկ չէինք՝ վաղն ալ չի պիտի ըլլանք .
բանի որ ամեն ուրեք բարոյական անկում
և ոչ տեղ մը պարկեշտութիւն և ուղղաձ-
ողութիւն չերեւիր :

— Ձեզի համար կըսեն թէ . . .
— Ժողովուրդն ալ մեզի հետ յուսա-
խաբուած է . մխիթարութեան նշոյլ մը իսկ չի
կայ :

— Կըսեն թէ շատ անգամ աջ ու ձախ
չէք նայիր, կծու կը խօսիք :


— Երբ քաղցրութեամբ խօսելով յու-
սախաբ մնանք, այն ատեն կը պարտաւորինք
կծու ըսել : Յուսախաբութիւն :

— Ի՞նչ ըսեմ . հոգին Սուրբ մխիթա-
րէ գձեղ : Մնաք բարով :

Եզրակացութիւն — Հիմա այս 9 տեսակ
աններդաշնակ նուագարաններով կարելի է
չէնք շնորհք Հայկական մառչ մը զարնել :



ԿԱԼՎԱՆԻՍԹ



Ամեն տեսակ
տպագրական կա-
ղապարներ պատրաստող, նաեւ
անձնակազմ և թէ՛ առևտրական կնիքներ:
Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան
պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երև-
ցած քառաչուէ կնիքներէ աւելի դիմացկուն են
և դիւրութեամբ կը տպագրուին: Գինն ալ
քառաչուէ գինէն տարբերութիւն չունի: Քա-
ղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով
կը կատարուին: Գինը ի շահոնա Զիլինկիր-
լէր փողոց թիւ 561: Գին գոհացուցիչ:

Տ Պ Ա Ր Ա Ն



ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք:

Այցետոմս, հասցետոմս, նոտակա-
գրութիւն, հրաւիրատոմս, բարենիշ. տոմ-
սակ եայլն եայլն թէ՛ պարզ և թէ
ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին.
Գին գոհացուցիչ: Գինը Հայելի խմ-
բագրութեան:

ԱԶԴ



ՃԱՇԱՐԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻԻՖԵՆԿԱՆԱՆ և ԸՆԿ.

Հաճի Բանաքօին ճիշդ գէմը

Արհեստին մէջ կատարելութեան հա-
սած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած

այս հովասուն, մաքուր ու գեղջական հաստա-
տութիւն ոչ միայն պատիւ կը կը բերէ հայ
ճաշակին, այլ եւ մեծ խթան մը կը ըլլայ որ
հայ ու օտար փափկակերներ իրենց գարնա-
նային ու ամառնային ժամադրովայր մը ը-
սեն զայն զբօսնելու ու ճաշելու:

Հարսանեաց և խնձօքներու սպասներ
ալ կը գտնուին, որոնք դիւրամատչելի գի-
ներով վարձու կը տրուին:

«Հայելի»ի Ա. տարւոյ թիւերը
կազմեալ կը վաճառին գին տասը ֆր.
Ա. Զարպհանէլեանի գրատունը:

Վայրկենական Տպագրութիւն
ԱՅՅԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի և ա-
նոր տուփին մէջ կը գտնուի Այցետոմսի գոր-
ծածութեան հրահանգը պարունակող տէտրակ
մը, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Գինը խմբա-
գրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանդիմն
յաւճեարարողին վրայ է: Գրամի փոխարէը
Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նա-
մակադրօշմ կ'ընդունուի: Կտնիկ:



ԳՈՒՇԱԿ
Ս Պ Ա Գ Ա Յ Ի
կամ Զուարճալի Բաղդացոյց
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով
գինը մեր խմբագրութեան:

Отговоренъ-редакторъ: Н. Драгулев

Печатница «Взаимность» — Варна.